


D. prop-norjunk

flumpjunk spkys

2/1933

891.990

P-89



Շ. ԹՈՐԳՈՄՅԱՆ

WB



ԲՆԱԿԻՔՅԱՆ  
ԳՐԿՈՒՄ

891-995  
P-81

ԹԵՍԼՐԱՏ

22 APR 2013

87447

2011-0



59167-66



891.99.0

թ-81

ԵՐԻՒՆ ՔՈՐԴՈՄՅԱՆ

# ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

ՆԿԱՐՆԵՐԸ ՅԵԼ ՏԵԽ. ԽՍՀ.

ԱՆ. ԳԱՍՏԱՐՅԱՆ

ԳԵՏԱՐԱԾ  
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՍԱԽԿՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1939



## ՊԱՐԿԸ

Սովորողի ձիերն արածում եյին լեռան կանաչագեղ լանջին։ Այստեղ փարթամ արոտ կար և կենդանիներն այս ու այն կողմ ցըված՝ մեծ ախորժակով ուտում եյին դալար խոտը։

Մութն ընկնում եր: Բարձրագագաթ լեռների վրա իջնում եր իրիկնային մառախուզը։

Քիչ հեռու ձիապանը պառկել եր մի քարի տակ և ննջում եր հանգիստ։

Հանկարծ ձիերը խրտնեցին և գրնջարով միմյանց հետեւց վազեցին գեղի սովխող, վորը մի քանի մերստ հեռու յեր արդ վայրից։

Այդ իրարանցումից զարթնեց ձիապանը և դաշտակը վերցնելով վեր թռավ։ Նա չհասկացավ, թե ինչու ձիերը խրտնեցին ու փախան։ Աւշադրությամբ իր շուրջը դիտելով մի քանի քայլ առաջ գնաց և ամայի տակից հազիվ պսպղացող լուսնյակի աղոտ լույսի տակ հեռվում նկատեց մի ստվեր։ Կասկածանքով շարժվեց գեղի սովերը և լեռան

լանջին գտավ ձիերից մեկը։ Զին անհանդիստ շարժվում եր սիևնույն տեղում և գլուխը վեր ու վար անում։

«Եղ ինչ սև պարկ ե կախվել ձիու մոռւթից, յարաբ...», մտմտաց ինքնիրեն ձիապանը և մնաց մի վայրկյան տարակուսած, շփոթված։

Բայց իսկույն ուշքի գալով դագանակը պինդ սղմեց ձեռքում և մոտեցավ ձիուն։ Վերջինս խզված ձայնով հաղիվ շնչում եր և պարկով կախված գլուխն անհանդիստ թափահարում։ Ձիապանը փայտով ուժեղ հարված հասցըց պարկին, վերջինս ցնցվեց, բաց թողեց ձիու մոռւթը, ներքև ցատկեց, փորնդտաց ու փախավ...

Մի քանի քայլ հեռու մթան մեջ ճրագների պես փայլվեցին մի զույգ աչքեր... Հետո այդ աչքերը հեռացան, անհայտացան։

Ձիապանը յերկյուղից ցնցվեց և քրտնեց ամբողջ մարմինը։

Իսկ ձին ազատ շունչ քաշելով, հետ-հետ գնաց և շշմածի պես նստեց գետնին։

Այդ պահին ձեն տալով սովորվից յեկան յերեք մարդ և ոգնեցին ձիապանին ուշքի բերել կենդանուն։ Նրանք շոյեցին ձիու բաշը, վիզը, մաժեցին մոռւթը, ուռնգերը և կամաց-կամաց ուշքի բերին։ Կենդանին մի քանի անգամ փոշտաց, թափահարեց մարմինը և վոտքի կանգնեց։ Նրա ոունգերի վրա յերկու կողմից նշմարվում եյին ատամի հետքեր։

Յերբ ձին առաջները զցած զնացին զեպի սովորվ, ձիապանն ընկերներին պատմեց ամբողջ յեղելությունը։

Սովորվի աշխատակիցներից մեկը գլուխը թափտվեց և ասաց.

— Գել ե յեղել Գելերն եղանք են։ Նրանք կախվում են ձիու մոռւթից՝ շնչահեղձ և ուժաթափ են անում, ապա բաց թողնում և վրա հասնելով հոշտում են նրան...

## ԽՈՐԱՄԱՆԿԻՑ ԽՈՐԱՄԱՆԿԲ

Գայլն անտառում տեսավ, թե ինչպես աղվեսը նստել ե մի ծառի մոտ, պոչը տակն ե գրել և գլուխը հենելով առջեկի թաթերին, հանգստանում ե:

«Հիմի քեզ կրոնեմ, այ խորամանկ աղվես». մտմտաց ինքնիրեն գայլը և կամացուկ, ծառերի ու խոտերի արանքից անշշուկ առաջ գնաց:

Գայլը լավ գիտեր, վոր խիստ խորամանկ վորսի հետ գործ ունի, դրա համար ել մեծ զգուշությամբ եր առաջ շարժվում: Ամեն մի ձայնից կանգ եր առնում, պահ մտնում ծառի կամ թփի տակ և աչքը միշտ ծառի մոտ նստած կենդանուն հառած՝ առաջ գալիս:

Աղվեսը նկատեց վրա համնող գայլին, սաստիկ վախեցավ, բայց չկորցրեց իրեն: Իսկույն իրեն զցեց ծառի հակառակ կողմը և յերկար պոչը փաթաթելով ծառի շուրջը, պահեց հարձակվող գազանի դեմ:

Կատաղած գայլը հարձակվեց, բայց աղվեսի փոխարեն իր գլխին զգաց նրա պոչի թեթև հարվածը... հետո տեսավ, թե ինչպես աղվեսը պոչից մի քանի մազ թողնելով իր բերանում, հենց իր քթի տակ ծառի հակառակ կողմից փախավ և թագնվեց մի քանի քայլ հեռու գտնվող վորջում:

Գայլը մոտեցավ և կանգնեց խոտերի արանքում գտնվող նեղ անցքի բերանին:

— Հանկարծակի վրա տալով ուզում եյիր բըռ-նել ինձ: — Այդ քեզ իսկի չեր հաջողվի, — ասում եր աղվեսն իր վորջի խորքից ծաղրելով:

Գաղաղած գայլն սկսեց թաթերով փորփրել աղվեսի բունը: Սակայն իզուր եր նրա չարչարանքը: Աղվեսն իր բնի խորքերում մի քանի խոր անցքեր ուներ և հեշտությամբ թագնվում եր այնտեղ: Յերկար տանջկեց գայլը, բայց բան գուրս չեկավ:

— Ա՛խ, յերանի դու այդքան խորամանկ չինեյիր, — բացականչում եր գայլը հուսահատված ու ընկճված, ատամները զուր տեղը կրծտացնելով...

## ՍԱՐՍԱՓԱՀԱՐ ԹՌՉՈՒՆԵԼ

Կապուտակ յերկնքում ճախրում ե ուրուրը համարձակ, ազատ և իրեն շատ յերջանիկ զգում։ Բայց նա սարսափում ե մարդուց։

Ներքեւ իջնելիս մեծ զգուշությամբ դիտում ե շուրջը, մոտ ու հեռու տարածությունները և, յերբ համոզվում ե, վոր մարդը կամ նրա ստվերը չի յերեվում, իջնում ե վորեւե բան վորսալու։

Մարդու ահիցն ե, վոր այդքան բարձր ե թրոշում, բարձր մինչև յերկնքի կապույտ շրթունքները և դառնում հազիկ տեսանելի մի կետ...»

Այնտեղ, վերևում, նրան կարող ե խանգարել հզոր արծիվը՝ իր ցեղի թագուհին։

Սակայն ուրուրն այդ ահարկութշնամուց փախչելու և թագնկելու հնարը լավ գիտե։

Կարեորն այն ե, վոր այնտեղ, վերեվում, մարդիկ չկան և նա հանգիստ իրեն համար ճախրում ե կտրելով հսկայական տարածություններ ու իր հրճվանքն արտահայտում դիլ ու սուր ճիշով։


Բայց մի որ, յերբ նա համարձակ ու ազատ ճախրում եր ողում, հեռվից նկատեց միքանի ոտար թոշուններ...»

«Ովքե՞ր են արդյոք դրանք։ Ինչ խոշոր են ու տարորինակ և ինչ վիթխարի տեսք ունեն ...» մըտմըտաց ինքնիրեն ուրուրն ահ ու զողով լցված և թներն անշարժ պահելով մի պահ սպասեց։

Անծանոթ թոշուններն հետզհետե մոտենում եյին, գնալով ավելի ու ավելի մեծանալով և, ով սարսափ, այնպիսի ականջ խլացնող ձայներ եյին արձակում, վոր վոչ մեկը թոշունների ցեղից այդպիսի ձայն չուներ...»

Սարսափից նրա մարմինը դողդողաց, փշաքաղվեց։

«Ի՞նչ խոշոր թեր ունեն, ինչ մեծ, ահարկում արմին և ինչ անոելի ձայն, աիս...» հառաչեց ուրուրը և յերկյուղից զիլ կանչեց։



Սակայն նրա ձայնը խլացավ մոտեցող թոշունների ականջ խլացնող աղմուկում։

Նա իր սուր աչքերով նայեց և... ինչ սարսափ։ Այդ տարորինակ թոշունների մարմնի թափանցիկ մասերում նկատեց մարդկանց զլուխներ...»

«Ոյ, ոյ, մարդիկ թոշուն դարձած ող են բարձրացեր ի՞նչ սոսկալի բան...», ճչաց ուրուրը և թերը

բաղիսելով փորձեց թռչել ավելի բարձր:

Բայց իգուր: Տարորինակ թռչուններն իրենից  
ամելի վերև թռան և թվում եր, թե նրանք շու-  
տով վրա կհասնեն և կընեն, կջախջախեն իրեն...

Նա աղեկուր ճիշ արձակեց և ամենայն արա-  
գությամբ փախավ լեղապատառ:

Ու մինչև այսոր ել փախչում ե սարսափահար  
ուրուրը...

## ԱՆՏԱՌԱՀԱՎ.

Վորսորդն անտառում յերկար շրջելուց հոգնեց  
և ուզեց հանգստանալ նրա կանաչախիտ բայցատ-  
ներից մեկում:

Նա վերարկուն փոեց խոտերի վրա, պառկեց  
կանակին և աչքերը հառեց տերեների արանքից  
ժպտացող կապուտակ յերկնքին:

Կողքին ընկած եր վորսորդական հրացանը:

Յերկնքի կապույտ տարածության վրա սև կե-  
տերի պես թռչուններ յերևացին, վորոնք իջան և  
թագնվեցին անտառի խորքերում:

Վորսորդը հրացանը պահեց վերարկույի տակ և  
կրկին անշարժ մնաց նույն դիրքում:

Շատ չանցած՝ թռչունները դարձյալ յերեացին  
յերկնքում և կամաց-կամաց ներքեւ իջան: Իջան  
ու նստեցին հանդիպակաց ծառի ճյուղերին, իրենից  
բավական հեռու:

Վորսորդն անշարժ սպասեց:

Թռչունները զգուշությամբ փոխում եյին իրենց  
դիրքերը և հետզհետե մոտենում:

Ահա նրանք թռան տերեների արանքով և ա-  
վելի մոտ գալով նստեցին հենց իր գլխավերի կոա-  
ցած կաղնու վոստերին:

Նրանք յերեքն եյին և շարունակ թագտում  
եյին տերեների արանքում:

Նրանցից մեկն ավելի ցած իջակ և թառեց փոր-  
ուրդի վրա կոացած ճյուղին:

Քիչ հետո յերկրորդն իջակ, ապա յերրորդը...

Ոյնքան մոտիկ եյին, վոր կանգնած մարդու  
ձեռքը կարող եր հասնել, շոշափել նրանց...

Այդպես նստած նրանք զլուխները վեր ու վար  
եյին անում, իսկ անհանգիստ աչքերը շարունակ  
վոստոստում եյին մեկ կետից մյուսը:

Թոշունները հավի մեծությամբ եյին, զանազա-  
նագույն փետուրներով, իսկ կրծքի բմբուլներն ու-  
նեյին խարտյաշ տեսք:

Նրանք սկսեցին կտցահարել միմյանց, ծվծվալ  
և յերեմն-յերեմն թևերը թափահարելով փետուր-  
ները կպցնում եյին միմյանց:

Այդպես զվարձանում եյին նրանք անհոգ:

Վորսորդը նստեց և մի քանի անգամ ծափ տը-  
վեց, բայց նրանք չփախեցան և չլրեցին դիրքերը:

Վորսորդը կանգնեց և ձեռքը յերկարեց դեպի  
ճյուղը: Թոշունները մի ակնթարթում փոխեցին դիր-  
քերը և ավելի վերև բարձրացան:

Վորսորդը ձեռներով սպառնաց, ծափ տվեց,  
«Հուշտ» արեց, բայց իզուր:

Թոշունները հանգիստ նստել եյին ճյուղի վրա  
և ուշադրությամբ նայում եյին, կարծես հեզնում,  
ծաղրում եյին նրան:

«Հըմ, ինչ աներեսն են: Այսքան մոտիկ նստել  
են ու չեն փախենում, ես ինչ բան ե...», մտմտաց  
փորսորդը զայրացած և կրկին կանչեց, սպառնաց:  
Բայց նրանք մնացին իրենց դիրքերում:

Ծնացին իրենց դիրքերում, և կարծես ծիծաղում  
եյին նրա վրա, արհամարհում նրա անզորությունը:

Վորսորդն ել ավելի ջղայնացավ և սպառնալի  
աչքերով նայում եր թոշուններին:

59167.66



Բայց ի՞նչ ոգում: Նրանք ամենեվին միտքչու-  
նելին թողնել իրենց դիրքերը:

Այս անգամ վորսորդը կոացավ և վերարկույի  
տակից վերցրեց հրացանը: Թոշուններն իսկույն թր-  
ռան ծառի վրայից, ծվծվացին և այնպես արագ ու  
շտապ փախան, վոր հրացանը մնաց զուր տեղը  
նրա ձեռքում սղմկած:

Նա իգուր եր նայում ծառերին ու յերկնքին,  
թոշունները չկային: Նրանք թագնվել եյին ով գի-  
տե անտառի վոր անհայտ վալրում:

Վորսորդը հրացանը դեն զցեց և ջղայնորեն շար-  
ժեց զլուխը:


## ԹԱԿԱՐԴՆ ԸՆԿԱՎ

Գոմեշն արածում եր ձորում: Հետո նա մտավ  
ձորից հոսող գետակը և նստեց նրա մեջ: Մինչև  
մեջը ծածկող ջուրը զովացնում և մեծ հաճույք եր  
պատճառում նրան: Դուրս գալով գետակից, նա  
իր ծանր մարմինը թափ տվեց և հեռանալով ա-  
մայի ձորում՝ սկսեց արածել:

Գոմշատերը գործով գնացել եր ինչ-վոր տեղ:  
Յերբ արել մայր մտավ և իրիկվա աղջամուղջով  
ծածկուց չորս կողմը, գոմեշը նկատեց իրեն սուտե-  
ցող գայլին: Նա ջղայնացավ, փնչաց և գլուխը դուրս  
գարձնելով գեպի գալը, ուզեց ուժեղ կոտոշներով  
հարվածել նրան: Սակայն գայլն ավելի փոքր և արա-  
գաշարժ լինելով, անցավ հաստամարմին կենդանու  
հետեւ և բարձրանալով նրա մեջքին, իր սուր ատամ-  
ները մեծ ուժով խրեց գոմեշի թիկունքի փոսկոր-  
ների մեջ: Սաստիկ ցավից գոմեշը խրտնեց և փա-  
խավ գեպի գյուղը: Գայլը շատ աշխատեց իր ատամ-  
ները գուրս քաշել, բայց չկարողացավ և հուսա-  
հատորեն ցնցվում եր գոմեշի մեջքին:

Գյուղում մեծ իրարանցում ընկալ: Հանդերից  
նոր վերադարձ գյուղացին հավաքվեցին. գյուղի  
հրապարակում շրջապատեցին գոմեշին և թակարդի  
մեջ առնելով խիստ դժվարությամբ կարողացան  
գայլին պոկել նրա մարմնից:





Այ, թե ինքն իր վոտքով թակարդի մեջ ընկավ գելը. — բացականչում եյին զյուղացիները ծիծաղելով:

Այդ գեպքը նրանց մեծ ուրախություն պատճառեց և նրանք ամբողջ մի շաբաթ պատմում ու ծիծաղում եյին:

## ԶՅՈՒՆԱԾԱՐԱՓ

Զմեռային սաստիկ ցուրտ յերեկո եր, Զյունը թանձրորեն ծածկել եր լեռներն ու ձորերը: Յերկինքը մառախլապատ եր, իիտ ամպերով ծածկված:

Ուղեպահն իր տնակից դուրս գալով սկսեց քայլել յերկաթզծի ճանապարհով, վորն անցնում եր ձորի միջից: Նա ցրտից պաշտպանվելու համար հագել եր վոչխարի մորթուց կարած թանձր վերաբկու, ձեռքին ուներ մի փոքրիկ ապակեծածկ լապտեր: Հանդարտ քայլերով առաջ եր շարժվում և մերթմերթ կանգ առնելով բահով մաքրում եր զծերի արանքում կուտակված ձյունը:

Բավական գնալուց հետո նա մոտեցավ յերկաթուղու մի շատ փոքրիկ կամրջակի, վորի մի կողմից մի նեղիկ ճանապարհ եր ձգվում անտառի միջով, լեռն ի վեր:

Կամրջակի մոտ, իրենից մի քանի քայլ հեռու, նա նկատեց յերկու սև ստվեր, վորոնք շարժվում եյին ձյուների վրա: Յեվ ինչփոք փայլուն կետեր եյին յերեռում, կարծես վառվող մոմեր լինեյին ..

Ուղեպահի մարմինը դողաց և սիրտն սկսեց ուժգին բարախել: Մոտ քառասուն տարեկան միջահասակ և ամրակազմ մարդ եր նա և ավելի քան տաս տարի գտնվում եր այդ պաշտոնում, բայց առաջին անգամն եր հանդիպում նման յերեռ յթի:

Ստվերն ու վառվող աչքերը կամաց կամաց մոտենում եյին իրեն, նա կանգ առավ և ուզեց յետ

դառնալու փախչել: Սակայն յետենում իրենից յերեք թե չորս քայլ այն կողմ տեսավլ գծի մոտ կանգնած մի ուրիշ ստվեր, վորը նույնպես կանգնած եր անշարժ...

Ուղեպահն ուզեց ոգնություն կանչել, բայց իզուր եր: Գյուղը բավականին հեռու եր, իսկ շըջակայքում վոչ մի մարդ չեր բնակվում: Նա մնաց տեղն ու տեղը քարացած, շփոթված, մի ձեռքում հազիվ իր շուրջը լուսավորող փոքրիկ լապտեր բռնած, իսկ մլուսձեռքում բահը պատրաստպահած սպասեց: Ստվերները յերկու կողմից մոտեցան և իրենից յերեք քայլ հեռու կանգնեցին: Յեվ պոչները շարժելով պսպղուն աչքերով նայում եյին իրեն...

Ուղեպահն իսկույն հասկացավ, վոր զբանք գայլեր են և սարսափից չգիտեր ինչ աներ: Յերկար սպասեց: Սաստիկ ցուրտը կծում եր նրա զեմքը և սառչում եյին ձեռքերն ու վատները, իսկ լապտերի ազոտ լույսը հազիվ եր փայլվում: Շուրջը թանձր մառախուղ եր, իսկ յերկնքից ընկնում եյին ձյունի խոշոր փաթիլներ:

Քայլերը նրան շրջապատած շարունակ նայում եյին և կատաղությունից բոցկլտում եյին նրանց աչքերը:

Ուղեպահը փորձեց բահով սպառնալ նրանց, հարվածել, բայց ձեռքը սառել եր, թուլագել չեր շարժվում: Վառվող աչքերը կարծես թե նրան գերել եյին, հիպնոգել ..

Ապա նա զգաց, թե ինչպես յերկու կողմից իր վրա ձյուն թափվեցին... Քայլերն իրենց պոչով ու վոտներով արորում եյին ձյունը և հարվածում նրան...

Անաբեկված ուղեպահն ընկապ ձյունե տարափի  
տակ:

Ձյունն առատորեն թափում եր իր գլխին,  
յերեսին. թիկունքին և ծեծում լապտերի աղակե  
պատերը: Նա վերջին ճիգերն եր գործ դնում, վոր  
լապտերի լուսը չհանգի, իր միակ փրկությունը  
գտնելով նրա մեջ:

Յերկու կողմից գայլերը յեռանդով ոմբակոծում  
եյին ձյունե մրրիկ թափելով նրա վրա: Նրանք  
ձգում եյին այդպիսով շշմեցնել, ձյունախեղդ անել  
նրան:

Ուղեպահը բոլորովին շփոթվել, կորցրել եր  
իրեն. աչքերը ձյունե մրրիկի միջից այլես վոշինչ  
չեյին տեսնում և նա ուժաթափ յեղած նստեց  
լապտերը ծնկների արանքում պահած:

Գայլերը յեռանդով շարունակում եյին իրենց  
գործը և սպասում եյին, վոր ճրագի վերջին աղոտ  
լույսն ել հանգի...

Այդ պահին սուլեց մոտեցող շոգեկառքը և  
գծերը դղրդացին: Շոգեկառքը մոտեցավ, բայց  
գայլերն անխոռվ շարունակում եյին ձյունե փո-  
թորիկ տեղալ:

Մեքենավարը մառախուղի մեջ նկատեց գծի  
մոտ ինչ վոր կասկածելի բան և միքանի քայլ հե-  
ռու շոգեկառքը կանգնեցրեց: Մեքենավարն ու իր  
ոգնականը լապտեր վառելով իշան և զգուշությամբ  
մոտեցան:

Վերջին և վճռական հարվածին պատրաստվող  
գաղաները մի քիչ հեռացան և գաղաղած աչքերով  
նայում եյին մոտեցող մարդկանց:

Մեքենավարն ու իր ոգնականը դժվարությամբ  
կարողացան տեղից շարժել և բարձրացնել ուղե-  
պահին: Նա հաղիվ եր շնչում և բոլորովին ուժա-

թափ եր յեղել, իսկ լապտերում լույսը հանգել  
եր և մարմրում եր միայն վերջին կայծը: Գիշեց  
ու վոաներից բռնելով ուղեպահին վոխաղրեցին և  
անդափոխեցին շոգեկառքի վրա իրենց ոթյակում:

Իսկ վորսը կորցրած և խիստ գաղաղած զայլերը  
վաղիգում եյին շոգեկառքի շուրջը և հուսահատո-  
րեն վոռնում:

Նրանք բավական տեղ ուղեկցեցին արագ սլա-  
ցող շոգեկառքին:

Ուղեպահը բավական յերկար պառկեց հիվան-  
դանոցում մինչև վոր կարողացավ կազմուրվել

Նրա ամբողջ կյանքում այդ ղեպքը մնաց վոր-  
պես մը անջնջելի հիշողություն...

## ՀՈՒՍՈՀԱՏ ԱՐՁԸ

Անտառի Խորքեւում արջը թափառում եր, վորպեսզի մի բան գտնի ուտելու։ Նրա զվարակոր ուտելիքը անտառի պտուղներն եյին, վորոնցից այդ տարի շատ քիչ կար:

Արջը յեռանդով բարձրանում եր ընկուղենու վրա, նստում նրա ճյուղերին, թաթերով պոկում ու կտրում ընկույզի կեղևները, բաւց նրանց մեջը դատարկ եր. ինչ վոր հիվանդությունից ընկույզը գեռ չհասած՝ մնացել փշրվել եր պատյանում և նրանցից շատ քչերն եյին ազատ մնացել հիվանդությունից։ Նույն վիճակում եր նաև կաղինը։

Վնասատու միջատները կերել, գոչնչացրել ելին նաև վայրի տանձն ու խնձորը, ինչպես նաև անտառի մյուս պտուղները, վորոնցից այդ աշնան շատ քիչ բերք կար.

Ահա թե ինչու արջն որերով թափառում եր անտառում, բարձրանում եր ծառերի վրա և ուտելու շատ քիչ բան գտնելով՝ ջղայնացած ներքե եր իջնում և գլուխը բարձր պահած՝ ռուսահատորեն նայում ճյուղերին ու տերեներին։

Նա չեր հասկանում, թե ինչու ծառերն այդ աշնան մնացել եյին համարյա թե պաղագուրկ, իսկ յեղածն ել բուբոներ, գոչնչացել եյին. Չեր հասկանում արջը և կատաղությունից չզիտեր ինչ աներ...



Նա սոված եր, ուտել եր ուզում, կատաղությունից կանգնում եր յետևի վոտքերի վրա ութը ում եր:

«Թու, ինչ պիտի լինի հապա սրա վերջը, միշտ եսպես քաղցած մնամ, թու...», և արջը բարկությամբ փայլեցնում եր րութ աչքերը:

Հաճախ նա նստում եր և լիզում իր թութը. Բայց ինչ ոգուտ, անքան ողարել եր խեղճը, վոր հալվել եր մարմինի ճարուր: Մինչդեռ ամեն աշնան նա պետք է ճարովակալեր, վորպեսզի ձմռան ամիսներին քուն մտնելիս, կարողանար իր ճարպով կերակրվեր:

Հապա ձմեռն ինչ պիտի լինի իր փիճակը...

Տիսուր մտքերով տարված արջը բարձրացավ քարագի ծայրին և այնտեղից հուսահատորեն նայեց խիստ անտառով ծածկված խոր ու ամայի ձորը: — Թու... բացականչեց նա, թքեց և գոռաց աղիողորմ ձայնով:

## ՄԻԱՄԻՏ ՀՈՎԼԻՎԸ

Մի հովիվ շատ միտք արեց, վորպեսզի մի հնարք գտնի գայլերին և շներին իրար հետ հաշտեցնի:

Նա պահում եր մեծ թլով վոչխաշներ, վորոնզիդ մի մասն ամեն տարի կորցնում եր գայլերի հարձակման պատճառով: Մուս կողմից վոչխարների պաշտպանության համար վարձու հոտաղներ և գայլախեղդ շներ եր պահում, վորոնց կերակրել եր պիտք:

Հովիվը նախ և առաջ հրավիրեց շների ներկայուցուցչին: Դա մի ահազին վրջոտ շուն եր, ճակատին սկ շերտեր, թափ պոշով:

— Յես ուզում եմ գայլերին հաշտեցնել ձեզ հետ և այնպես անել վոր այսուհետեւ գայլերը խաղաղ ապրեն և դառնան անվնաս, — ասաց հովիվը:

— Այդ յերբեք ձեզ չի հաջողվի: Ոենք և գայլերը թեև միենույն ցեղին ենք պատկանում. բաւց անհաշտելի թշնամի յենք իրար: Հենց վոր նրանք անպաշտպան վոչխար կամ գառ տեսնեն, վորքան ել կուշտ լինեն, իսկույն հարձակվում են պատառ-պատռ անում: Իսկ ընությունը մեզ վրա պարտականություն ե դոել ամեն կերպ պահպանել անպաշտպան անառուններին, թեկուզ մեր արյան գնով: Ահա թե ինչու մենք անհայտ հակառակորդներ ենք միմյանց, պատասխանեց շների ներկայացուցիչը: — Իսկ չի կարելի այնպես ասել վոր այլես նը-

լանք չհարձակվեն անպաշտպան անասունների վրա և գայլն ու զառը խաղաղ ապրեն:

— Հըմ. — Իեզնանքով մոմոաց շունը քթի տակ, իզո՞ր պիտի չարչարվեք, բան դուրս չի գա:

Իայց հովիվը չլսեց նրան և տուաջ տարավ իր ջանքերը: Այս անգամ հրավիրեց գայլերի ներկայացուցչին:

Ներկայացավ գայլերի վոհմակապետը, մի հաստավիզ, արյունոտ աշքերով գաղան և նստեց մի քանի քայլ հեռու:

— Ինչպես անենք, վոր դուք գայլերդ խաղաղ ապրեք և այլևս մնաս չտաք իմ հոտին: Ոխր յես ամեն տարի ահազին մնաս եմ կրում ձեր պատճառով, — ասաց հովիվը:

Գայլերի վոհմակապետը յերկար մտածեց և պատասխանեց:

— Յեթե ուզում եք, վոր մենք, գայլերս խաղաղ ապրենք, պետք ե մեզ հանգիստ թողնեն մեր ցեղի ամենավոխերիմ թշնամիները:

— Ո՞ւմ մասին ե ձեր խոսքը. շների՞:

— Այո: Հապա ել ուրիշ ուժ:

— Ախըր, դուք յերկուսդ ել մի ցեղից և արյունից եք, ել ինչո՞ւ յեք այդքան իրար ատում և շրունակ միմյանց հետապնդում:

— Թեև պատկանում ենք մի ցեղի և արյունի, բայց մեր բնությունը տարբեր եւ:

— Զի կարելի, վոր ակելի պարզաբանեք ձեր միտքը, — հարցրեց հովիվը լավ չհասկանալով նրան:

— Իմ միտքը շատ պարզ եւ: Մենք, գայլերս շարունակ ամայի տեղերում և տափաստաններում, անտառի խուլխորքերում ապրելով վայրենացել ենք, վորս քիչ ենք գտնում. միշտ աղահ ենք ու սոված, շարունակ հետապնդելով ջղայնացել, գաղաղել ենք:



— Յեթե ձեզ վոչ վոք չհետապնդի, արդյոք դուք  
կհրաժարվեք ձեր սովորություններից:

— Յս կարծում եմ, — հայտարարեց գալլը, — այդ  
դեպքում ել պատճառ չի լինի մեղ կատաղելու և  
արյուն թափելու:

— Լավ, դուք գնացեք, յես ձեզ իմաց կտամ,  
— ասաց հովիվը յեղափակելով խոսակցությունը:

Վոհմակավար գալլը կրկին փախավ անտառի  
խորքերն իր ընկերների մոտ:

Հովիվը կանչեց իր շներին և հաղորդելով նրանց  
գալլերի հետ իր բանակցությունները, առաջարկեց  
հաշտ ապրել միմյանց հետ:

— Մի հավատաք խորամանկ գայլերին, նրանք  
ձեզ խարում են, — զգուշացրեց շներից մեկը, ամենափորձվածը:

Մյուս շներն ել թերահավատությամբ շարժե-  
ցին գլուխները:

Բայց հովիվը չլսեց իր հավատարիմ շների խոր-  
հու րդը և լուր ուղարկեց գայլերին, վորպեսզի ազատ  
ու համարձակ դուրս գան իրենց վորչից: Նրանց  
այլես վոչ չի հետապնդում:

Այսուհետեւ գայլերը համարձակ դուրս ելին գա-  
լիս անտառից և զբոսնում նրա փեշերին: Իսկ  
շները շրջապատում եյին վոչսարների հոտը  
և ալես չեյին հետապնդում իրենց թշնամիներին:

Թուե գայլերը վոչ մի վսաս չեյին տալիս, բայց  
հետգիտես ավելանում եր նրանց թիվը:

— Տեսն ւմ եք, ինչուես հանգիստ են պահում  
իրեն, գայլերը: Իզուր եյին ձեր կասկածները, —  
ասաց հովիվը շներին և շատ միամտվեց:

Յեկ հովիվը ել առաջվան նման չեր կերակրում ու  
գուրգուրում իր հավատարիմ շներին: Նրանք զգացին

այդ և վորուշեցին փորձել գայլերի տված խոստումը:

Մի առավոտ, յերբ վոչսարներն առածում եյին  
խոան կանաչագեղ լանջին, շները խնդրեցին հովիվը  
թույլ տալ իրենց զբոսանքի գնալու: Հովիվը  
սիրով համաձայնվեց, վորովհետեւ այլևս առաջվա-  
նման չեր վախենում գայլերից: Շները, թեև գնացին,  
բայց զգուշության համար իրենցից յերկուսին պա-  
հակ դրին ճանապարհին, վորպեսզի վորևե վտանգի  
զեպքում հետ զառնան: Նրանք խմբով իջան ձորը  
և սկսեցին զբոսնել այստեղ հոսող ջրի յեղերքին:

Դուրս գալով անտառից գայլերը շատ ուրա-  
խացան, վոր վոչսարի հոտը մնացել և առանց շների:  
Իսկույն իմաց տվին իրար և առանց ժամանակ կորց-  
նելու, կատաղի հարձակում գործեցին վոչսարների  
վրա: Խեղճ անասունները սարսափից շփոթվեցին,  
իրար կորցրին և մոլորված ու շշմած վաղեցին դես  
ու դեն:

Իսկ կատաղած գայլերը սոսկալի ատամներով  
կատարում եյին իրենց արյունոտ գործը:

Սաստիկ վախից հովիվը կորցրել եր իրեն և  
ինքն ել պատառ-պատառ պիտի լիներ, յեթե շներն  
ոգնության չհասնեյին: Շների գալուց և կատաղի  
կովից հետո միայն արյունարբու գայլերը նահան-  
ջեցին ու փախան:

— Հիմա համոզվեցիք, վոր գայլերի հետ չի կա-  
րելի խաղաղ ապրել և նրանց վոչ մի զեպքում չի  
կարելի վստահել, — ասացին շները:

Թեև հովիվը միանգամայն համաձայն եր իր  
հավատարիմ շների հետ և բոլորովին զղացել եր  
իր գործած սխալի համար, բայց արդեն ուշ եր:  
Գայլերը նրա հոտից վախցրել և վոչնչացրել եյին  
ահազին թվով վոչսար:

Այնուհետև հովիվը խիստ հրաման արձակեց իր  
ընկերներին և շներին, վոր նրանք շարունակ հե-  
տապնդեն և անխնա փոչնչացնեն գայլերին, վոր-  
պեսզի նրանց հետքն անգամ չմնա յերկրի վրա:

## ՈՉՆ ՈՒ ՎԱԶՆԻՆ

Այգեգործը շատ աշխատելուց հոգնեց և պառ-  
կեց ծառի տակ հանգստանալու: Ողոստոսի շոգը  
նեղում եր և տոթից ու հոգնածությունից այգե-  
գործի քունը տարավ:

Մի քանի քայլ հեռու խաղողի վորթատունկերի  
արանքում պահված վոզնին նկատեց, թե ինչպես  
մի դեղնավուն ոձ թփերի միջից սողալով մոտե-  
նում եր հանգիստ քնած այգեգործին:

Մերթ կանգ եր առնում ոձը, կոլոլվում, պոչը  
շարժելով, գլուխը ցից պահած, կանաչ աչքերը  
չարությամբ լցված, ապա դարձյալ սողում եր ա-  
ռաջ:

Վոզնին վորթատունկերի արանքից դուրս յե-  
կավ ու կամացուկ հետապնդեց սարսափելի սողու-  
նին:

Ոձը մոտեցել պատրաստվում եր փաթաթվել քը-  
նած մարդու վոտոերին և իր թունավոր ատամով  
խայթել նրան, յերբ վրա համառող վոզնին գլուխը  
դուրս հանեց փշերի միջից, պինդ բոնեց սողունի  
պոչից և դարձյալ գլուխը ծածկեց փշերի մեջ:

Ոճն սկսեց թափ տալ իրեն, ծոմովել, կոլոլվել,  
բայց հնար չեղավ ազավելու վոզնու բերանից:

Սաստիկ ցնցվելուց ոձի մարմինը, ինչպես նաև  
գլուխը, շարունակ կպչում եյին վոզնու փշերին և  
ծակծկվում, արյունոտվում եյին:



Այդպես ջղագար ցնցումներով սարսափելի սո-  
ղունը կամաց-կամաց թուլացավ:

Այս անգամ վոզնին սկսեց սողունի գլուխը  
խփել իր փշերին և գարձնել արյունաթաթավ:

Յերկար չարչարվելուց հետո, վերջապես անշրն-  
չացավ ոձը և անշարժացավ նրա հոշոտված, ար-  
ունոտված մարմինը:

Վոզնին բաց թողեց սատկած սողունին և պատ-  
րաստվեց ուտել նրան:

Հենց այդ ժամանակ այգեգործը զարթնեց և  
յերկյուղով նկատեց իր վոտների մոտ ընկած թու-  
նավոր սողունը...

Սաստիկ վախից ճիչ արձակեց և տեղից ցատ-  
կելով վերցրեց կողքին ընկած բահը:

Վոզնին սկսեց հետ քաշվել դեպի խաղողի թր-  
փերը:

Այգեգործը բահով շուռ ու մուռ տվեց սատ-  
կած ոձը և, յերբ համոզվեց, վոր նա արդեն ան-  
վնաս ե, մոտենալով վոզնուն՝ ասաց.

— Ինչու յես խուսափում ինձնից, այ իմ ֆրկա-  
րար, պատարար վոզնի։ Յեթե զու չլինեյիր, յես  
հիմա թունավորվել եյի։

Յես վոչ թե քեզ փրկելու համար սպանեցի  
նրան, այլ կատարեցի իմ պարտականությունը:  
Բնությունն իմ ուսերին դրել ե ամենածանր և ա-  
մենապատասխանատու պարտականությունը՝ բըռ-  
նել ու վոչնչացնել ոձերին, — պատասխանեց վոզնին  
և թագնվեց խաղողի վորթատունկերի արանքում։

## ԴՅՈՒԹՅԱՆ ՅԵՐԳԵՐ

Պիոներական լագերը գտնվում է լեռան կանաչագեղի լանջին: Ներքեց գեղատեսիլ հովիտն եւ Այնտեղից խշաշալով անցնում է արագահոս գետակը: Լեռան լանջն ի վեր ձգվում է ծառաշատու ծաղկավետ այգին, վոր շրջապատված է մշկենիներով և վարդի թփերով:

Իսկ լեռան բարձունքն ի վեր կանաչ գորգի պես տարածվում է անտառը:

Պիոներական լագերում հանգստանում է պատանի բանաստեղծը:

Ի՞նչ հիանալի որեր անցկացրեց նա այնտեղ: Վորքան հրճվեց և ուրախացավ և վոր զվարուն ե, ինչ սքանչելի յերաժշտություն լսեց:

Ծրշալույսին, յերբ լույսերը նոր մարմրում են հովտի գեղանկար հորիզոնում, պատանին զարթնում է և կիսաբաց լուսամուտի առաջ դրված իր մահակալին թիկնած՝ նայում է դուրս, դեպի շքեղագրդ հովհանք:

Ի՞նչ հիանալի տեսարան:

Կամաց-կամաց զրվում է մառախուղը, արեկի ձառագայթները թափանցում են ամեն տեղ: Յեկամենից հրաշալին այն զվարի յերգերն են, վոր այնպես ախորժելի յե հնչում նրա ականջին:

Լուսամուտի դեմ առ դեմ կանգնած բարձրաբերձ բարդու կատարին սարյակն է արեկի յելքը վաղունում, մյուս ծառերի վրա արտուտներն

են գեղգեղում, ճլվլում են ձնձղուկները, իսկ անուշաբույր վարդի թփի մեջ նստած սոխակը դայլայլում ե շարունակ...

Յեկ թռչունների յերգերից հյուսվում է մի գյութիչ համերգ, մի սքանչելի յերաժշտություն:

Ի՞նչ հիացմունքով է լսում պատանին այդ յերաժշտությունը: Կարծես ամբողջ բնությունը վոտքի յե յելել արեկի ծագման հետ յերգում է, նվազում, գեղգեղում...

Պատանին չի համբերում, կամացուկ հագնվում է և դուրս գալիս սենյակից, վորպեսզի քնած ընկերներին չխանգարի:

Դուրս է գալիս, իջնում այգին: Նրան վողջունում են զով ու պայծառ առավոտը, անշղուկ նորածագ արեկ վոսկեփրփուր շողերով, կապուտակուջինջ յերկինքը և շքեղագարդ բնությունը:

Թռչունների անուշ զայլայլով լցված է ամբողջ այգին: Կարծես թե պատանին գտնվում է մի յերեփակայական, հեքյաթային աշխարքում:

Հանդարտ քայլում է նա կանաչագեղ ու ծաղկապատ պուրակներով, լսում է թռչունների քաղցը մեղեղիները և իջնում է հովիտ:

Ո՛, այնտեղ մի նոր սքանչելի համերգ կա, արագընթաց ջրերի ալիքների խշխցոցը:

Վորքան անուշ է այդ յերաժշտությունը, վորքան պայծառ է շրջակայքը, յերկինքը կապուտակ մշուշ, լեռները կանաչ, կանաչ...

Իսկ շուրջը ջրերի անսպառ խշոց, թռչունների հմայիչ զայլայլը:

Ականջ է դնում հիասքանչ պատանին այդ սքանչելի ձայներին և այնպես չի ուզում անջատվեր հեռանալ այդ հրաշալի վայրերից:

## ԵԺԱՆ ՊՐԾԱՆ

Սրջն իր վորջից դուրս յեկավ, վորպեսզի ջուր խմի: Սաստիկ ծարավ եր:

Ամբողջ շրջակայքը, լեռներն ու ձորերը ձուռով ծածկվել եյին: Ճերմակ շապիկ եյին հազել կարծես անտառի ծառերը: Իսկ յերկնքի յերեսին թանձրամպեր եյին շարպեր:

Թեև սաստիկ ցուրտ եր, բայց կենդանին իր մարմնի մեջ այնքան եր ճարպ հավաքել ու ճարպակալել իսկ թանձր մորթի մազերն այնքան եյին յերկարացել ու խտացել, վոր չեր մըսում:

Ցուրտն ու ձյունն այնքան չեյին մտահոգում նրան, վորքան կասկածը, վոր թափանցել եր նրա սիրտը և ճնշում եր:

Նա վախենում եր վորսորդներից, վորոնք այդ ամիսներին գալիս եյին հետապնդելու իրենց:

Արջը բնազդորեն զգում եր այդ և ձյուների միջով զգուշությամբ իջնում եր ձորը: Անտառածածկ ձորի սպիտակ տարածության վրա վոչ մի ստվեր չեր շարժվում: Յերբեմն-յերբեմն այս կամ այն ծառի ձյուղից ձյունի սառած շերաեր եյին թափվում: Արջը կանգնում եր մի պահ, հոտոտում և ապա կրկին իջնում:

Նա թափանցեց անտառի խորքերը և այնտեղ մի բացատում գտավ փոքրիկ լճացած ջուր: Աղի յեր այդ ջուրը և մեծ ախորժակով կենդանին լիզեց:

Հետո հանգստացավ և ձորամիջում հոսող վտակից հազեցը իր ծարավը:

Վտակի յեզերքից մի նեղ ճանապարհ եր վոլորդում սարն ի վեր: Ճանապարհը ծածկող ձյունի վրա նա նկատեց քայլերի հետքեր: Զգաց, վոր այդտեղից մարդիկ են անցել և մեծ ուշադրությամբ նայեց շուրջը: Նա զգաց նաև, վոր մարդիկ կարող են իրեն հետապնդել և գտնել միմիայն իր վոտների հետքերով: Վորոշեց կորցնել այդ հետքերը: Մտավ ջուրը և բավական տեղ գնաց ջրի միջով: Հետո դուրս յեկավ, բարձրացավ ճանապարհով ու կրկին մտավ ջուրը և դարձյալ բավականաշափ գնաց վտակի միջով:

Սակայն այդ չոգնեց իրեն: Մի ուժեղ բան թնդաց անտառում: Նա լեզապատառ նայեց շուրջը, հոտոտեց և մարդու հոտ առավ... Հանդիպակաց քարափի վրա նկատեց վորսորդին՝ հրացանն իրեն ուղղած: Կատաղությունից մոնչաց և փորձեց բարձրանալ քարափը: Սակայն խիստ զառիվեր լինելով, չհաջողվեց նրան: Վորոշեց հետ զառնալ և փախչել, թափնվել իր վորջում: Սակայն հազիվ եր հասել իր վորջին, յերբ կրկին թնդաց և մի սուր բան ծակեց իր թաթի ազդը: Սաստիկ ցավ զգաց, զայրույթից ու ջղայնությունից զուաց և թափնվեց իր վորջում:

Նրա վորջը գտնվում եր ժայռերի մեջ բացված քարանձավում: Մտնելով նրա խորքերը, արջն սկսեց զղայնացած թքել և ապա լիզել արյունոտած թաթի ազդը:

Թեև բոլորովին ապահով եր զգում իրեն քարանձավի խորքերում, բայց ցավից ու կատաղությունից նա մրթմրթում եր, թքոտում և փայլեցնում բութ աչքերը:

Յըջին հետապնդող յերկու վորսորդ կորցնելով  
նրա հետքը, բավական թափառեցին անտառում:  
Նրանք ջղայնացել եյին, վոր իրենց գնդակները զուր  
անցան: Յերկար թափառելով քարաժայոի մոտ,  
ձյուների վրա նկատեցին արյան հետքեր: Այդ հետ-  
քերով հասան քարանձավին և մտածեցին մի վո-  
րեւ հնար գտնել արջին այնտեղից դուրս բերելու:

— Պետք ե շատ զգուշ լինել, — ասում եյին  
նրանք միմյանց, — արջը վիրավորվել ե և այդ վի-  
ճակում այնքան ջղայնացած ու գազազած կինի,  
վոր կարող ե դուրս ցատկել և վնասել մեզ:


Հին, վորձված վորսորդներ եյին նրանք և գի-  
տեյին արջ վորսալու դժվարությունները: Նրանք  
թագնվեցին քարանձավից վերև մի ապահով տեղ  
և այնտեղից սկսեցին «հոյ» «հոյ» կանչել... Բայց  
իդուր, կենդանին դուրս չեկավ իր վորջից:

Տեսնելով, վոր վոչ մի հնարքով չի կարելի ար-  
ջը խրանեցնել և դուրս բերել իր թագստարանից,  
վճռեցին կրակ վառել և ծուխ տար: Մեծ քանակու-  
թյամբ չոր փայտ դարսելով քարանձավի անցքում,  
վառեցին:

Ծուխը մտավ քարանձավի խորքերը և լցվեց  
այնտեղ: Հազիվ հանգստացած արջը դարձյալ վըր-  
դովվեց...

«Աւք մտնես, վորտեղ թագնվես, միևնույն ե.  
մարդկանցից չես ազատվի, — մոմոռում եր նա ջղայ-  
նացած:

Հետզհետե ծուխն ավելի թանձրացավ ու խր-  
տացավ վորջում: Հուսահատ արջի աչքերից արտա-  
սուք եր թափվում, շունչը կտրվում եր և շնչահեղձ  
լինելուց ազատվելու համար ստիպված յեղավ կըր-  
կին դուրս գալ վորջից: Դուրս գալով վորսորդնե-



րից մեկին նկատեց քարանձավի գլխին և մեծ ուժով իրեն ցցեց դեպի իր վոխերիմ թշնամին։ Սակայն լավեցին ականջ խլացնող թնդյուններ և գընդակները զանազան տեղերից սուր կերպով մտան արջի մարմնի մեջ։ Նա չկորցրեց իրեն, կարողացավ հասնել վորսորդին, վերջին ճիգերը հավաքելով խըրբեց նրա ձեռքից հրացանը և ժայռից ներքեւ շպրտեց։ Սակայն այդ վայրկյանին թնդաց մյուս վորսորդի հրացանը և գնդակը ծակեց արջի կուրծքը։ Արջը բոլորովին ուժաթափ լինելով, հազիվ կարողացավ թաթերով բռնել զինաթափ յեղած վորսորդին և թքեց նրա սարսափից գունատ դեմքին... Հետո նրա հետ միասին ընկավ ներքեւ, քարերի վրա, և ել վոչինչ չզգաց։

Յերբ մյուս վորսորդը վրա հասնելով ազատեց իր ընկերոջն անշնչացած արջի թաթերից, ընկերն այնքան եր վախեցել ու սփրտնել, վոր հազիվ ուշքի յեկավ։

Ուշքի յեկավ, թաշկինակով մաքրեց թքոտած յերեսը և ասաց։

—Մի լավ թուք ու մուր կերցրեց ինձ, հետո սատկեց շանվորդին։

—Յես քեզ չասացի, վոր հեշտ բան չե արջի հետ գործ ունենալ լավ եր, վոր եսքանով պրծանք, — պատասխանեց ընկերը ծիծաղելով և վոտքով տնտղեց արջի ճարպոտ մարմինը։

## ԱՆՏՈՒՈՒՄ

Շատ հաճելի յէ անտառը, նրա կանաչագեղ արդակայրը, նրա խաղաղությունը։

Դրա համար ե, վոր Գուրգենն ու Լևոնը այդպես գրավված՝ մեծ հետաքրքրությամբ թափանցում եյին անտառի խորքերը։

—Հրեն մոռը, —բացականչում եր Լեոնը և ուրախ-ուրախ վագում զեպի մոտակա թվերը։

Ծառերի և խոտերի արանքում բուսած թփերի վրա կարմրին եր տալիս այդ անուշահամ պտուղը։

Լևոնն ու Գուրգենը մեծ սիրով ու յեռանդով քաղում եյին մոռը։ Փոքրիկ համեղ պտուղները ժպտում եյին թփերի, տերևների արանքում։ Վորքան առատ եյին նրանք անտառի խորքերում։

Տղաների արամադրությունը շատ բարձրացրեց անտառի այդ հրաշալի կերակուրը։ Նրանք ամբողջովին տարվեցին, քաղում եյին, ուտում և լցնում փոքրիկ զամբյուղները։

Վոսկեպայծառ արեր ծառերի վրայից անցնելով սկսեց իջնել յերկնքից։

Յերկու ընկերները վերադառնում եյին անտառի խորքերից։ Նրանցից ամեն մեկը մոռով լցրել եր ձեռքի զամբյուղը և բարձր տրամադրությամբ քայլում եր ծառերի ու թփուտների արանքից։

—Ի՞նչ հիանալի զրուանք, — ասաց Գուրգենը չկարողանալով զսպել իր ուրախությունը։

—Յես յերբեք չեմ մոռանա անտառային այս  
ճամբորգությունը, — վրա բերեց Լևոնը:

Նրանց դեմքին փայլում եր գոհունակության և  
հիացմունքի ժպիտը:

Բայց ահա նրանց ուշադրությունը զրավեց  
ծառերի արանքում պտույտ գործող մեղուների  
միապաղաղ ձայնը:

—Ինչպես յերեսում ե, եստեղ մեղվի բուն կա, —  
ասաց Լևոնն ուշադրությամբ դիտելով շուրջը:

Նրանք դանդաղեցրին քայլերը և հետաքրքրու-  
թյամբ հետևում եյին մեղուների շարժումներին,  
մանրամասն ուսումնասիրում մոտակա ծառերը:

Հետզհետե մեղուների միապաղաղ յերգն ավելի  
ու ավելի յեր զգալի դառնում:

— Հրես յես գտա, — բացականչեց Գուրգենը  
հրճվալից ձայնով և փորձեց մոտենալ մի հաստա-  
բուն ծառի:

Իսկապես, ծառի բնի մեջ մի մեծ փշակ կար,  
իսկ փշակի շուրջը բազմաթիվ մեղուներ եյին արգ-  
ուում, ներս ու դուրս անում:

— Միանգամից մոտենալը դժվար ե, կիսայ-  
թեն, — խորհուրդ տվեց Լևոնը և նրանք կանգ ա-  
ռան ծառից մի քանի քայլ հեռու:

Գուրգենին ու Լևոնին տեսնելով մեղուները  
զայրացան և փշակի մոտ պահակ կանգնած՝ պատ-  
րաստվեցին ընդհանուր հարձակում գործելու:

Ավելի առաջ գնալը դժվար եր և վտանգավոր:

Հենց վոր տղաները փորձում եյին առաջ շարժ-  
վել, մեղուների բզզոցը սաստկանում եր: Շուտով  
նրանք պաշտպանական դիրքից անցան հարձակողա-  
կանի: Նրանցից մի քանիսը համարձակ թոփչք-  
ներ կազմակերպեցին դեպի տղաները և պտույտ-



ներ գործեցին նրանց շուրջը։ Մեղուներից մեկը կպավ Գուրգենին և խայթեց նրա վիզը...

Պատանին ճշաց և տրորեց վիզը։ Դա կարծես ավելի վոգեռեց մեղուներին և այս անդամ նրանք խմբերով մոտեցան։

Պատանիներն ստիպված յեղան վոչ միտյն առաջ չգնալ այլ և նրանք չգիտեյին ինչպես հեռանան այդ վայրից, ազատվեն...

Յեկ զամբյուղները ձեռներին մի կերպ հետ փախան։

Թեև նրանք բավական հեռացել ելին այդ վտանգավոր վայրից, բայց հանդուզն մեղուները դեռ շարունակում եյին հետևել նրանց, սպառնալի շարժումներ գործել ծառերի արանքում, նրանց շուրջը։

Յերբ տղաներն ել ավելի հեռացան, հասան համեմատաբար ազահով տեղ, մի պահ կանգ առան և ազատ շունչ քաշեցին։

—Վորքան համառ են այդ մեղուները, —ասաց Գուրգենը խոտերի վրա նստելով։

—Համառ են, վորովինետե նրանք չեն ուզում, վոր իրենց հալալ աշխատանքի պառուղն ուրիշների ձեռքն ընկնի, ուրիշները վայելեն։ Նրանք ամբողջ որն աշխատում են և իրավունք ունեն իրենց հալալ քրտնքի վաստակը պահպանել՝ թեկուզ իրենց կյանքի գնով...

Խոտերի վրա նստած ընկերները դրույց եյին անում և հանգստանում։

Արևն իջավ հանդիպակաց լեռան կոնակը։ Նրա վերջին ցոլքերը դեռ պսպղում եյին լեռան գագաթին։ Հայելու պես ջինջ յերկինքն իջնում եր վերեից։

Լևոնն ու Գուրգենը բարձր տրամադրությամբ գուրս յեկան անտառից և քայլերն ուղղեցին դեպի մոտակա իրենց հանգստարանները։

Նրանք շատ գոհ մնացին այդորվա զբոսանքից։ Առանձնապես նրանց վրա խորը տպավորություն եր գործել մեղուների կյանքը։

# ՅԵՐՁԱՆԻԿ ԱՐԵՐ

1.

Ամառվա ամիսներին Վազգենը հյուր եր իր քեռու մոտ, վոր Վարդանլույի խորհանտեսության մեղվապահն եր:

Կանաչագեղ ընդարձակ ձորումն ե տեղավորված խորտնտեսությունը՝ շրջապատված անտառածածկ լեռներով։ Հանդիպակաց լեռան լանջին յերեքում ե խճուղին։ Ներքեր, ծառագարդ ձորում, վտակը հոսում ե արագընթաց։ Չախ կողմից մի ուրիշ շքեղ հովիտ ե բացվում անտառներով ծածկված, վոր ձգվում գնում ե դեպի լեռների խորքերը։ Այդ հովտից գլխապտույտ արագությամբ մի առվակ ե վազում և զալիս միանում ե գլխավոր ձորից հոսող վտակին։ Ահա այդ շքեղ հովտում և արագահոս առվակի յեզերքին եր անցկացնում Վազգենն իր ժամանակի մեծ մասը։ Խորհանտեսության մեջ ապրող իր հասակակից յերկու ընկերոջ՝ Սուրենի ու Վահրամի հետ հաճախ իջնում եր սնտառածածկ հովիտը և գնում նրա բարձրունքն ի վեր։ Նրանք իրենց համար պատրաստել եյին լողանալու հարմար տեղ ե, յերբ կեսօրվա արեն այրում եր, գալիս հովանում եյին ջրի մեջ։ Իսկ վորքան ջինջ եր ու գուլալ լեռնայիս այդ վտակի ջուրը, պայծառ ինչպես կապուտակ յերկինք, ախորժելի։ Վազգենն ու իր ընկերները լողանում եյին և տաքանում առվակի յեզերքին, ամառվա արևի ջերմ շողերի տակ։

Վորքան խինդ ու ծիծաղ, չարաճճի կատակներ և պատանեկական կենսուրախ խաղեր եյին խաղում այդ գուլալ ջրերի արծաթաշող գրկում։

2.

Խորհանտեսությունից քիչ հեռու, մի ավազոտ վայրում, միմանց մոտիկ տեղավորված ե յին չորս հարյուր փեթակ։ Շուրջը կանաչ մարգագետին՝ ամբողջովին առվույտով կապույտ ծաղիկներով ծածկված։ Այդ բնդարձակ մարգագետինը շոյում եր աչքն իր բազմաթիվ կապույտ ու դեղնավուն ծաղիկներով։ Ի՞կ առվույտի ու յերեքնուկի փոքրիկ տերեների վրա ամեն առավոտ արծաթի պես պսպղում եր դուք։ Այնտեղ մի ընդարձակ վայտաշեն շենք կար զանազան մասերից բաղկացած, ուր տեղավորված եյին պահակի փոքրիկ սենյակը փեթակների վրա նայող ապակեպատ լուսամուտներով, մեղրի պահեստը՝ կարպաներով և թիթեղե սափորներով ու գրասենյակը։

Այդտեղ եր լինում ահա Վազգենի քեռին՝ Գարեգին Ավետիսյանը։ Նա բարձրահասակ, նիհար, միշտ լուրջ դեմքով մոտ հիսուն տարեկան մարդ եր, զբաղվում եր մեղվաբուծությամբ և սիրում եր այդ գործը։ Չնայած նա սակավախոս մարդ եր, բայց հաճույքով ու վոգեվորությամբ եր Վազգենին պատմում մեղրի, փեթակների ու մեղուների մասին։

— Ո՞, շատ հետաքրքիր կյանք ունեն մեղուները։ Նրանց կյանքը փեթակում շատ նման է գործարանային կյանքին։ Ինչպես վոր գործարանում աշխատանքը բաժանված ե բանվորների մեջ և նրանցից ամեն մեկը պատասխանատու յե իր գործի համար, այնպիս ել մեղուները փեթակում։ Ամբողջ որը

գացնելու համար։ Շուտով մեր մշակած ծառերը  
կհասնեն, հաղարավոր փթերով խնձոր և ուրիշ պտուղ՝  
ներ կարտահանենք այստեղից։ Ես ել ինչ խնձոր,  
քաղցրահամ շաքարկենի, թթվաշ լիմոնի, կարմ-  
րաթուշ բելֆլյորը և այլն, — ասում եր նա վագե-  
վորված և վաղգենին ու իր ընկերներին հրավի-  
րում հասած խնձորենու մոտ, թափ եր տալիս ծա-  
ռը և հյուրասիրում նրանց խոշոր քաղցրահամ  
խնձորով։

— Կերեք, անուշ արեք բալամ, թող հալալ լինի  
ձեզ։ Խորհուտեսության բարիքները վայելեցեք...  
Յերեխաներին հյուրասիրելուց հետո, Միրա-  
քյանը նրանց առաջնորդում եր նորատունկ ծառերի  
շրջանը։ Ծառերը գեռ մատղաշ եյին և իրարից  
բավական հեռու կանգնած։

— Ութ խորանարդ մետք ե նրանք հե-  
ռու լինեն իրարից, վորպեսզի միմյանց շխանգա-  
րեն և կարողանան ավելի ազատ և բագ աճել։ Մենք  
ընտրել և աճեցնում ենք ամենաաղնիվ տեսակի  
ծառեր և շատ ժամանակ չի անցնի, յերբ մենք կկա-  
րողանանք պտուղների առատ բերք տալ յերկրին...  
Ուրախ ու գոհ պատանիները շնորհակալու-  
թյամբ բաժանվում ելին այգեգործից և իջնում  
ձորը՝ իրենց սովորական լոգանքը կատարելու։

#### 4.

Բլրի գաղաթին, ընդարձակ հարթավայրի վրա,  
քառակուսի շրջան կազմած, նստել են խորհատու-  
տեսության սպիտակ շենքերը՝ գրասենյակը, ծա-  
ռայողների ու բանվորների յերկշարք բնակառան-  
ներն ու հանրակագրանները։ Հանդիպակաց կողմը  
ճաշարանն ե, պահեստարանը, գոմի ու ախոռը։

Մեղվապահ Ավետիսյանը յերկու օենյակ ունի,  
նրանցից մեկի լուսամուտը նայում է գեպի կա-  
նաչազարդ ձորը։ Ահա այդ սենյակումն է ընում  
Վաղգենը և ամեն առավոտ լուսածեզին զարթնե-  
լիս՝ լսում է ծառերի վրա ճռվողող թռչունների  
անուշ յերգը։ Արտուտներն են այնտեղ ճռվողում,  
ծիտն է ծլվում կամ սարյակն արեկի յերեալը վող-  
ջունում։ Յերբեմն-յերբեմն ձորում բուսած վարդի  
թփերի միջից լսվում է տոխակի մեղմ գեղգեղանքը։

Նախաճաշից հետո ընկերների հետ գնում եյին  
մոտակա անտառ մոռ ու մոշ քաղելու։ Այստեղ  
բավական տարածության վրա տնկել եյին և մշա-  
կել մեծ քանակությամբ մոռի և մոշի թփեր։

Յեկ ամբողջ շրջապատը կարմրին եր տալիս...  
Ինչ գեղեցիկ տեսարան և ինչպիսի անուշահամ  
պտուղներ։ Վայելիր բնության այդ հրաշալի բա-  
րիքը... Փափտում ե շուրջդ ամեն ինչ...  
Վաղգենն ու իր ընկերները ժամերով պառկում  
եյին այդ թփերի արանքում, ճաշակում քաղցրա-  
հյութ մոռը, նայում կապուտակ յերկնօրին, վորի  
վրա ուղտանման ամպերը սահում եյին վոքրիկ  
շարքերով։

Հետո իջնում եյին հովիտ, վորտեղ Կիրովականի  
միջնակարգ գպրոցի գասատու Սիսակյանը վտա-  
կում ձուկ եր վորսում։ Սուրենն ու Վահրամը մեծ  
հարգանքով վողջունում եյին իրենց ուսուցչին։  
Նրանք ապրում ու սովորուա եյիս Կիրովականում,  
իսկ ամառվա ամիսներին գալիս եյին խորհուտու-  
թյան մեջ աշխատող իրենց ծնողների մոտ։

— Ընկերներ, ասում եր Սիսակյանը, — յեկնք մի-  
ասին ձուկ բռնենք։ Այս լեռնային վտակի մեջ  
վոքրիկ, բալց համավ ձկներ կան, կարմրախայտ  
տեսակից։ Դրանք շատ համեղ են և առողջարար։

Տղաներն, ինչ խոսք վոր սիրով ընդունեցին  
Սիսակլանի առաջարկը:

Սիսակլանի ձեռքին փոքրիկ ուռկան կար: Բայց  
դեռ ձուկ չեր բռնել, վորովհետև հենց նոր եր  
յեկել այնտեղ:

Յերեխաներն սկսեցին կամաց-կամաց բարձ-  
րանալ ջրի հոսանքով և ուշադրությամբ դիտել  
նրա խորքերը: Սակայն իզուո անդավ նոանց աշ-  
խատանքը, չկարողադան իրենց նպատակին հասնել:

— Ըսկեր Սիսակյան, — յեկեք վորոշ տարածու-  
թյամբ չորացնենք ջրի հունը, ջրի ընթագը վո-  
խենք ուրիշ ուղղությամբ: Այդ ձեռվ գուցե կարո-  
ղանանք հասնել մեր նպատակին:

Սիսակյանը հավանություն տվեց այդ տուա-  
ջարկին և յերեխաները մեծ աշխատժությամբ անցան  
զործի: Նրանք բավական չարշարվեցին մինչև վոր  
կարողացան փոխել ջրի ընթագը: Իսկ վորոշ տարա-  
ծության վրա նախկին հունի ջուրը կանգնած մնաց:  
Այնտեղ մնացած ձկները, վորոնք սովոր ելին շա-  
րունակ ընթանալ ջրի հոսանքով, մնացին արգե-  
լափակված և թփրտում ելին ցամաքող ջրի մեջ:

— Հրեա յես մինը բռնեցի, — ուրախ ձայնով  
բացականչեց Վագգենը և ձեռքին ցույց տվեց արդեն  
շնչահեղ՝ դարձած կարմրախայտ:

— Յես ել բռնեցի, — բացականչեց Սուրենը:

Յափ բոլորի գեմքին փայլեց վոգեվորության  
ուրախ ժպիտ:

Սիսակյանի ուռկանում բավական ձուկ հա-  
փաքեց և նա առաջարկեց ընկերներին ոջախ պատ-  
րաստել, խորովել ձկները և միասին ճաշել այդ  
գեղեցիկ փայլում: Ինչ խոսք, վոր այդ առաջարկը  
սիրով ընդունվեց բոլորի կողմից:

Տղաները շատ ուրախացան, վոր ճաշելու յեն  
իրենց սիրելի դաստիարակի հետ:

Վահրամն ու Սուրենը գնացին խորհտնտեսու-  
թյունից հաց բերելու: Սիսակլանը վտակի ավին  
քարերից ոջախ պատրաստեց, իսկ Վագգենը մո-  
տակա անտառից չոր փայտ ու տերե հավաքեց ու  
բերեց:

Շուտով ոջախում վառվեց կրակը և Սիսակյանը  
ոջախի վրա դարսած ձկներն իրար հետեւից խորովեց:  
Խորովվող ձկների անուշ բուրմունքը բռնել եր չորս  
կողմը և ախորժակ եր գրգռում:

Սուրենն ու Վահրամը հաց բերին, կանաչ խո-  
տերի վրա նստած սկսեցին ճաշել:

— Այ թե ինչպիսի համեղ ճաշ ունեցանք այս  
գեղեցիկ վայրում, — ասում եր Սիսակյանը կտրելով  
ձուկը և բաժանելով տղաներին:

Տղաները շատ գոհ մնացին: Նրանք յերեք  
չմոռացան բնության գեղատեսիլ զբկում անցկաց-  
րած անմոռանալի, ուրախ որերը:

## ՍԱՀՄԱՆԱՊՈՀԸ

Մի վորբիկ քարաթումը և գծում սահմանը,  
վորից վոչ այնքան հեռու անտառի փեշին տեղա-  
փորված և և ջոկատը:

Այդ հանդիսավոր որը սահմանապահ Հրայրը  
պահակ եր կանգնել: Միջահասակ, առույդ ու ժիր  
յերիտասարդ եր նա պղնձագույն գեմքով, սև, ար-  
տահայտիչ աչքերով: Նա ամուր բռնել եր սվինա-  
վոր հրացանը և ուշադիր դիտում եր քարաթմբից  
են կողմն ընկած քարքարոտ տարածությունը: Նրան  
շատ պատվավոր զործ եր հանձնված և նա պար-  
տավոր եր իր կյանքի գնովն անգամ հսկել ու պահ-  
պանել հայրենի հողն ու ջուրը:

Սահմանապահ Հրայրն այդ որը կրկնակի ուրախ  
եր: Հանդիսավոր փայլ եր ստացել նրա զեմքը և  
ժպտում եյին աչքերը: շողում եյին ինչպես յեղ-  
յամի կաթիւները նորածաղ արել ճառաղայթների  
տակ:

Այդ որը լրանում եր Կարմիր Բանակի քսան  
տարին, իսկ Հրայրն ել կանգնում եր իր կյանքի  
քսանմեկերորդ գարնան շնմքին...

Ի՞նչ մեծ ուրախություն ու հրճվանք նրա  
համար:

Քսան գարուն եր բոլորել Կարմիր քանակային  
Հրայրը: նա ծնվել աճել ու մեծացել եր Կարմիր  
Բանակի հետ միասին:

«Բայց ի՞նչ նվաճումներով եր նա դիմավորում  
հաղթական կարմիր Բանակի քսաներորդ տարե-  
դարձը...»


Այսպես մտածելով Հրայրը քայլեց սահմանագծի  
յերկարությամբ: Նա սկսեց վերհիշել իր կյանքի  
գլխավոր դեպքերը: Նա հաջողությամբ սովորել եր  
միջնակարգ դպրոցում, յեղել եր որինակելի պիո-  
ներ, ճշտապահ ու կարգապահ: Հետո անցել եր կոմ-  
յերիտմիության շարքերը, մի տարի ել աշխատել  
եր մեքենաշինական գործարանում վորպես փակա-  
նագործ, վորից հետո նրան կանչել եյին կարմիր Բա-  
նակ:

Ահա նրա կյանքի համառոտ պատմությունը:  
Վերջին ամիսներին սահմանագծում մի զեպք  
եր պատահել նրան:

Մի անգամ Հրայրն ու կարմիրբանակային  
կուզմինը մի մեծ քարի լեռու թիկսել հանգստա-  
նում եյին: Երանք շրջապատված եյին թփուտով  
և զրսից մնացել եյին աննկատելի: Թփուտների  
արանքից Հրայրը տեսափ, թե ինչպես յերկու ան-  
ծանոթ մարդիկ սահմանի քարաթմբից անցան և  
մեծ զգուշությամբ շարժվեցին անտառի կողմը:  
— Իրանք անպայման լրտես կլինեն, — կամա-  
ցուկ ասած Հրայրը և ցույց տվեց հեռվում շարժ-  
կող մարդկանց:

— Սահմանը խախտողներ են, — պատասխանեց  
կուզմինը, ինքն ել ուշադրությամբ թփուտների  
արանքից նայելով: — Յեկ հանկարծակի վրա տանք  
և բռնենք դրանց, քանի զեռ անտառ չեն մտել:  
Անտառ մտան թե չե, կարող են հեշտությամբ  
թագնվել նրա խորքերում:

կուզմինի առաջարկը լավ եր: Նրանք կամա-



ցուկ դուրս յեկան թփուտներից և արագորեն վազեցին զեպի սահմանը խախառղները: Վերջինները շփոթվեցին այդ հաւկարծակի հարձակումից: Նրանք չեյին սպասում, վոր այդ ըլջանում կպատահեն սահմանապահների: Նրանք կարծում եյին, վոր ապահով կանցնի անտառում թագնվելը: Սահման խախտողները փորձեցին ժախչել, բայց չկարողացան: Կուզմինն ու Հրայրը կտրեցին նրանց ճանապարհը և զենքի ու ժով ստիպեցին անձնատուր լինել:

Սահման խախտողներն արտասահմանից ուղարկված լրտեսնեո եյին...

Այս դիպվածի մասին գրեցին նաև կենտրոնական թերթերում և Հրայրը շատ գոհ եր, վոր մասնակցել ե հայրենիքի պաշտպանության գործին:

Հրայրի պահակության ժամը լրացավ: Նրան փոխարինեց ուրիշ սահմանապահ:

Սրեն արդեն իջնում եր յերկնքից, լերը Հրայրն անտառի վեշով գնաց իրենց ուղեփակը: Գեղատեսիլ ծառերով ու կանաչներով շրջապատված եր ուղեփակը: Այստեղ մեծ ուրախություն եր: Ն... ջոկատի մարտիկները ճաշում և գարմոն եյին նվազում: Կարմիր ուղմիկների տրամադրությունը խիստ բարձր եր, մարտական և տոնական: Նրանք ուրախ յերգում եյին, նվազում ու պարում:

Ջոկատապետ Սանասարը Հրայրին նստեցրեց իր կողքին և հայտարարեց.

— Ընկերներ, մեր անհաղթ Կարմիր Բանակի քսաններորդ տարեղարձի հետ լրացավ նաև Հրայրի քսան տարին: Խմենք մեր շարքային ընկեր, մեր հայրենիքի նվիրական սահմանները պահպանող կարմիր ուղմիկները կենացը: Թող նա միշտ հավատարիմ մնա իր դիրքում, վոչ վոքի շթողնի

խախտել մեր սահմանը և լինի մեր հարենիքի  
յերկաթակուռ զինակիրը...

— Ուռա...— կանչեցին կարմիրբանակալինները  
և ջերմորեն վողջունեցին իրենց սիրելի ընկերոջը:  
Հրայրը ժպտում եր և նրա աչքերը փայլում  
եյին պայծառորեն:

—

## ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԶՈԳՆԵՑ

Յեղջերուն արածում եր ամայի հովտում:

Հիանալի արոտ կար այնտեղ և կենդանին մեծ  
ախորժակով արածում եր հյութալի խոտը: Մեկ-  
մեկ գլուխը բարձրացնելով, վախվորած աչքերով  
նայում եր չորս կողմը և, յերբ համոզվում եր, վոր  
վոչ վոք չի խանգարում կամ հետապնդում իրեն,  
կրկին շարունակում եր արածել:

Հունիսյան պայծառ արեր ժպտում եր յերկըն-  
քից:

Հովտում խոխոջում եր վտակը: Զոերը զար-  
կում եյին քաերին, յերգում անուշ ձայներով և  
արագորեն առաջ ընթանում:

Այսպես անցավ բավական ժամանակ:

Մեկ ել հանկարծ կենդանին ինչ վոր շրմկոց լը-  
սեց: Նա իրտնեց, ականջները ցցեց և վախեցած  
նայեց շուրջը: Իա մի փոքրիկ շատ փոքրիկ քար  
եր, վոր վերեից, ժայռերի վրայից ներքե գլուխեց  
ուղիղ նրա վոտների մոտ:

Յեղջերուն ականջները սրած նայեց չորս կող-  
մը, բայց կասկածելի բան շտեսավ:

Սակայն նա չհանգստացավ և սաստիկ հուզված  
եր: Ականջը լարել տեսողությունը սրել՝ աշխատում  
եր մի բան տեսնելու կամ լուս:

Նա իր տեղը մի բանի անդամ փոխեց և շա-  
փաղանց զգաստացավ:

Յեվ, յերբ համոզվեց, փոր կասկածելի բան  
չկա, կը կին շարունակեց արածեր.

Հանկարծ մոտակա քարաժայոի տակ մի ստվեր  
խաղաց, մի մութ բան... կենդանու մարմինը փշա-  
քաղից, սարսափից քարոցավ մի վայրկյան. Հե-  
տո ուշը յեկավ, արագորեն վազեց լեռան բարձ-  
րունքն ի վեր: Բայց իզուր, այդ մութ մարմինը  
կտրեց նրա ճամբան:

Լեռան անցքում կանգնած եր գայլը բերանը  
բաց, ատամերը սրած, արյունոտ աշբերով:

Յեղջերուն հետ դարձավ և ստիպված յեղավ  
փախչել անտառի կողմը. Հենց այդ ել ուզում եր  
գիշատիչ գայլ:

Նա ուզում եր, փոր յեղջերուն անտառ մտնի:  
Անտառում նրա բազմաճյուղ յեղջյուրները ծառե-  
րին կկպչեն, փախչել չի կարողանա և համեղ կերա-  
կուր կղառնա դայլին...

Բայց անտառում յեղջերուն չշփոթվեց: Նա  
զլուխը բարձր պահեց, յեղջյուրները գցեց մեջքին  
և ծառերի արանքով արագորեն առաջ անցավ:

— Հրմ, տես ինչպես եփախչում... Միևնուն ե չես  
ազատվի, զայրույթով մլուտաց գայլը և ատամերը  
կրծտացնելով համառորեն հալածեց յեղջերվին:

Յեղջերուն զգագ, փոր անտառում հետեղետե-  
ծառերը խտանում են, թփերն ու թփուտները ա-  
փելանում: Դրանք դժվարացնում, արգելում եյին  
նրա ճամբան: Նա դուրս յեկավ անտառից և  
վազեց լեռն ի վեր:

— Ես լավ յեղավ,—մտածեց դայլը,—կը արձրա-  
նաս սարը, այստեղ ճանապարհ կմոլորեցնեմ և  
քարայրի ու ժայռերի վրայից ներքե կդորեմ...

Յեղջերուն արագությամբ բարձրանում եր

սարը, փոստնում եր մի քարից մյուսը և ամեն կերպ  
աշխատում եր գայլից ազատվել:

Տեսնելով, փոր այս փորձն ել չի ոգնում, գայլը  
կանգնեց և կատաղությունից վոռնաց:

— Այժմ պետք ե թագնվել և թակարդ գցել եղ  
հիմարին: Ամենալավ միջոցն այդ ե:

Այսպես մտածելով գայլը թագնվեց ժայռերի  
արանքում և մտավ մի խուլ քարանձավ: Այդտե-  
ղից նա զգուշությամբ հետևում եր յեղջերվի շար-  
ժումներին:

Յեղջերուն ժայռերի վրայից վոստնելով յելավ  
բարձր-բարձր լեռան գագաթը հասավ և այնտեղից  
նայեց ներքե:

Ահարկու թշնամին անհայտացել եր, ել չեր  
յերեսում:

Յեղջերուն ծարավ զգաց: Խոր հովտում զլզա-  
ցող և արեի տակ արծաթի պես պսպղացող ջուրը  
սաստիկ գրգուում եր նրա ախորժակը:

Բայց նա փախենում եր, չեր համարձակվում  
ներքե իջնել:

Արևն իջավ լեռան կողից և թեքեց դեպի արե-  
մուտք: Որը յերեկոյանում եր, Գիշատիչ գայլը վոտ-  
րով-զիմով կորել եր, փոչ մի տեղ չեր յեռեսում:

Յեղջերուն հանգստացավ և իրեն ծանոթ ճա-  
նապարհով իջավ հովտու: Լեռան լանջին ցցված քա-  
րաժայռերի արանքից անցնելիս՝ քարանձավում  
թագնված գիշատիչ գագանը դուրս յելավ և հար-  
ձակվեց նրա վրա...

Յեղջերուն մի վոստյունով ցատկեց մի բար-  
ձր քարի վրա և այնտեղից ել վեր յելնելով գրա-  
վեց անառիկ դիրք:

Փայլը մնաց քարաժայռի տակ և փորձում եր  
բարձրանալ վերև: Բայց իզուր... նրան չհաջողվեց

համեմ յեղջերվին և ջանքելն ապարդյուն անցան:

Քարաժայոիտակ կանգնած գայլը բերանը բացած նայում եր վերև, կատաղությունից ու անզորությունից կրծտացնում տտամները և փոռնում եր խուլ ու հուսահատ:

Իջավ իրիկունը և իր սև քողի տակ ծածկեց ժայռերն ու քարանձավները:

Յեղջերուն բարձրանում եր լեռն ի վեր. և ծածկվելով խավարի մեջ, անհայտանում տեսողությունից:

Նա անչափ ուրախ եր, վոր ազատվեց խորամանկ զայլից և այժմ իրեն զգում եր ապահով ու ազատ լեռան անմատչելի բարձունքում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Պարկը . . . . .	7
2. Խորամանկից խորամանկը . . . . .	10
3. Սարսափահար թոշունը . . . . .	12
4. Անտառահավ . . . . .	15
5. Թակարդն ընկավ . . . . .	19
6. Զյունատարափ . . . . .	22
7. Հուսահատ արջը . . . . .	26
8. Միամիտ հովիվը . . . . .	29
9. Ոճն ու վոզնին . . . . .	35
10. Դյութական յերգեր . . . . .	38
11. Եժան պրծան . . . . .	40
12. Անտառում . . . . .	45
13. Յերջանիկ որեր . . . . .	50
14. Սահմանապահը . . . . .	58
15. Խորամանկությունը չոգնեց . . . . .	63

Պատ. Խմբագիր՝ Ա. Հայրյան  
Սրբագրէ՛ Ա. Արզաքանյան

Դավթիակ լիազոր՝ Վ. 2100. Հըսաւ. № 4784.  
Պատկեր 41. Տիրաժ 4000.  
Թուղթ 62×94. Տպագրական և Ժամ.  
Մեկ մասուլում 24. 480 նշան.  
Հանձնված և արտադրության 25 ռեզանտրերի, 1938 թ.  
Ստորագրված և տպագրության համար 25 հունվարի 1939 թ.

Գետեքատի 1 ապացան, Ցեղեկան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0399561

8747

III